ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Լևոն Բալյանի և Պրոբացիայի ծառայության պետ Արամ Նիկոյանի՝ Վրաստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Լևոն Բալյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ և Արամ Նիկոյան՝ ԱՆ պրոբացիայի ծառայության պետ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Վրաստանի Հանրապետություն (Թբիլիսի), 2023թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը:

Հրավիրող կողմը՝ Վրաստանի Հանրապետություն (արդարադատության նախարար Ռատի Բրեգաձե):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Նորամուծություններ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրողների և պրոբացիայի շահառուների վերականգնողական գործընթացում» խորագրով բարձր մակարդակի համաժողովին:

Քննարկված թեմաները՝ քրեակատարողական համակարգերում ձեռք բերված առաջընթացի, համակարգում կիրառվող թվային ծառայություններին, ինչպես նաև կրթական, սպորտային, արվեստի և այլ վերասոցիալականացման-վերականգնողական ծրագրերին առնչվող հարցերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Թբիլիսիում տեղի ունեցած համաժողովում բացման խոսքով ելույթ է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին և Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն:Համաժողովին տարբեր երկրներից մասնակցել են բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, այդ թվում՝ նախարարներ, փոխնախարարներ, քրեակատարողական և պրոբացիոն ծառայությունների տնօրեններ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ: Նորամուծություններ բանտարկյալների եվ պրոբացիայի շահառուների վերականգնման եվ վերասոցիալակցման գործընթացում

բարձրաստիճան համաժողովին բարձրացվել և քննարկվել են այնպիսի թեմաները, ինչպիսիք են ՝ թվայնացումը քրեակատարողական համակարգում, թվային նորարարություններ քրեակատարողական հիմնարկներում կրթության ոլորտում, քրեակատարողական համակարգում վերականգնողական մոտեցման զարգացումը թվային գործիքների կիրառմամբ, վերականգնողական-վերասոցիալականացման ծրագրեր, դատապարտյալների պահման պայմանների և նրանց նկատմամբ վերաբերմունքի առնչությամբ միջազգային ստանդարտներ՝ վերականգնողական-վերասոցիալականացման լույսի ներքո, քրեակատարողական և պրոբացիայի համակարգերի արդյունավետ կառավարում:

Համաժողովին զուգահեռ անցկացվել են պանելային և կլոր սեղան ձևաչափով քննարկումներ պատվիրակությունների ղեկավարների հետ: Վրաստանի արդարադատության ղեկավար կազմի հետ քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, երկկողմ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ իրականացնող աշխատանքները:

Միջոցառմանը զուգահեռ կազմակերպվել է նաև թեմատիկ ցուցահանդես, որտեղ պատվիրակները ծանոթացել են վրացական հաջողված բարեփոխումներին՝ PROBBOX-ին, «Re-market»-ին և Լայտուրիի նորակառույց քրեակատարողական հիմնարկին:Արձանագրվել է,որ այս հարթակը հնարավորություն է տալիս գործընկեր պետություններին և միջազգային կազմակերպություններին ծանոթանալ վերջին տարիներին քննարկվող ոլորտներում գրանցած առաջընթացին և կիսել եվրոպական առաջատար երկրների լավագույն փորձը:

Իրականացվել է այցելություն քրեակատարողական հիմնարկ, որտեղ պատվրիակները ծանոթացել են քրեակատարողական հիմնարկի կառուցվածքին և խնդիրներին, պատասխանատվության շրջանակներին,ինչպես նաև վերահսկողական գործառույթներին և համագործակցության շրջանակների կապակցված հաստատությունների հետ: Տեղի է ունեցել ինտերակտիվ քննարկում բանտի անձնակազմի և պրոբացիայի աշխատակիցների հետ: Պատվիրակները նշում են այն փաստը, որ քրեակատարողական հիմնարկում գտնվող գրեթե բոլոր

դատապարտյալները ապահովված էին աշխատանքով, որոնցից հիմնական ուղղություններն էին՝փայտամշակումն ու կաշվե իրերի արտադրությունը:

Նոյեմբերի 2-ին առանձին հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի պատվիրակության և Վրաստանի արդարադատության նախարարի տեղակալի, պրոբացիայի ծառայության պետի հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել ոլորտային համագործակցության և զարգացման նպատակով համատեղ ծրագրերի իրականացման հնարավորություններին:

Վրաստանի Հանրապետություն այցի արդյունքում, ուսումնասիրելով Վրաստանի և միջազգային փորձը պրոբացիայի ծառայության համակարգում, մասնավորապես՝ կառուցվածքը, գործունեության հիմնական ասպեկտները, համագործակցության բնույթը և շրջանակը, ձեռնամուխ կլինենք համաժողովի ընթացքում կայացած հանդիպումների, քննարկումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները խորացնելու, խթանելու ոլորտի լավագույն փորձի փոխանակմանն ու նորարարական տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացմանը:

Արդարադատության նախարարի տեղակալ **Լևոն Բալյան**

Պրոբացիայի ծառայության պետ **Արամ Նիկոյան**

07.11.2023թ.